

Աստոմին® Գել

ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՐԱՀԱՆԳ

ԱՍՏՈՄԻՆ® Գելը օգնում է թեթևացնել ցավը, որը առաջանում է բերանի խոռոչի լորձաթաղանթի այնպիսի ախտահարումների հետևանքով, ինչպիսին են՝ աֆտոզ ստոմատիտը, աֆտոզ խոցերը, փոքր վերքերը, որոնք առաջացել են ատամների ամրակներից և անհարմար պրոթեզներից:

Ազդեցությունը

Աստոմին գելը պարունակում է պոլիվինիլպիրոլիդոն (PVP) և հիալուրոնաթթու, որոնք պաշտպանիչ շերտ են ստեղծում բերանի խոռոչի լորձաթաղանթի վրա, որը ծառայում է որպես մեխանիկական պատնեշ ախտահարված հատվածներում թեթևացնելով անպաշտպան նյարդային վերջավորությունների գրգռման հետևանքով առաջացած ցավը: Բաղադրության մեջ առկա հիալուրոնաթթուն և Ալոե Վերան նպաստում են վնասված հյուսվածքների բնական ապաքինմանը:

Օգտագործման ձևը

Գելի 1 կամ 2 կաթիլ քսել բերանի խոռոչի խոցի կամ վերքի ամբողջ մակերեսով: Խուսափել վերքի հետ ապիկատորի անմիջական շփումից: Առնվազն 2 րոպե չշոշափել վերքը լեզվով, որպեսզի ձևավորվի պաշտպանիչ շերտ: Յուրաքանչյուր օգտագործումից հետո փակել կափարիչը: Լավագույն արդյունքի համար խորհուրդ է տրվում օգտագործելուց հետո առնվազն 1 ժամ չուտել և չխամել:

Օգտագործել օրական 3-4 անգամ կամ, ըստ անհրաժեշտության, ավելի հաճախ:

Բաղադրությունը

Ջուր, պոլիվինիլպիրոլիդոն (PVP), մալտոդեքստրին, պրոպիլենգլիկոլ, PEG-40 գերչակի հիդրոգենացված յուղ, քսանտանային բուսախեժ, կալիումի սորբատ, նատրիումի բենզոատ, նատրիումի հիալուրոնատ, բուրավետիչ, բենզալկոնիոմի քլորիդ, ԷԴՏԱ դինատրիումական աղ, սախարին նատրիումական աղ, դիկալիումի գլիցիրիդատ, Ալոե վերա (Aloe barbadensis):

Ուշադրություն

Աստոմին® գելի յուրաքանչյուր պարկուն պետք է կիրառել միայն մեկ հիվանդի համար՝ բացառելու ապիկատորի և գելի փոխադարձ ադոտումը: Ցանկացած բաղադրիչի նկատմամբ գերզգայնություն ունեցող հիվանդներին հակացուցված է Աստոմին® գելի օգտագործումը: Հղիության դեպքում դեղամիջոցը օգտագործելուց առաջ խորհրդակցե՛ք ձեր բժշկի հետ: Բերանի խոռոչում խոցերի հաճախակի առաջացման դեպքում խորհուրդ է տրվում դիմել բժշկի:

Նախազգուշացում և նախազգուշական միջոցներ

Չօգտագործել պիտանելիության ժամկետի ավարտից հետո, կամ եթե պարկունը վնասված է և կա արտահոսք: Պահպանել երեխաների համար անհասանելի վայրում: Պահել սենյակային ջերմաստիճանում, ջերմության աղբյուրներից հեռու և չսառեցնել:

Պարունակություն

8 մլ

Արտադրող

Ալիանա Ֆարմա Սրլ,
Վիալե Ռեստելի 5,
20124 Միլան, Իտալիա

Տարածող ընկերություն

Բեռլին-Խեմի ԱԳ (ՄենարինիԳրուպ),
Գլինիքեռ Վեգ 125,
12489 Բեռլին, Գերմանիա

Իսմբագրման ամսաթիվ 09.2016